Ջրակուսցի փայտագործը

ՀԱՅՐԵՆԻՔԻ ՄԵԼԻՔ ՎԱՐԴԱՆՅԱՆ. ԱՊՐՈՒՄ ԵՎ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒՄ Է ՀԱԴՐՈՒԹԻ ՇՐՋԱՆԻ ՋՐԱԿՈՒՍ ԳՅՈՒՂՈՒՄ

Մելիքը 1951 թ. զորակոչվում է բանակի շարքերը:

Զորացրվելուց հետո նա մեկնեց Բաքու. Աշխատանքի անցավ Լենինանան Շմիդտի անվան մեքենաշինական գործարանում, որտեղ աշխատողների մեծ մասը հայեր էին:

Օրերից մի օր գյուղից ստացավ մի երկտող: Գրում էր հայրը՝ Ենովքը.

«Որդիս, գյուղում քո կարիքն ավելի շատ է զգացվում: Արի...»:

Դժվար էր բաժանվել հարազատ կոլեկտիվից: Բայց չէր կարող չլսել և հայրենի գյուղի կանչը: Գյուղում բոլորն էլ գիտեին նրա ստեղծագործական շնորհքի մասին՝ թե՛ որպես փայտագործի, թե՛ որպես երաժշտի: Նա դպրոցում տանում էր երաժշտության դասեր ու ղեկավարում հմուտ ձեռքերի խմբակը:

Նա լավ գիտեր, որ կիրառական արվեստի ճյուղերն էլ սերտորեն կապված են իրար հետ. փայտագործություն, մետաղի, կաշվի մշակում...

Նրան ձգեց փայտը, և ուշացած երազները սկսեցին քանդակվել փայտի վրա: Չիմացածը կարդալով լրացրեց, և կյանքում մոռացված կերպարները, որոնք երբեք չեն քնում հիշողության ծալքերում, մարմին առան, դարձան «Ճախարակ», «Գութանի երգ», «Պայտագործ», «Բուրդ գզող», «Գուլպագործուհի», «Երաժիշտներ», «Բրուտագործ» և այդպիսի շուրջ քառասուն գործ:

Երբ նայում ես այդ գործերին, կարծես լսում ես «Հորովելի» հոգեզմայլ մեղեդին.

Մերքետ ճպատը ժապկե յա,
Պենդ չթխիս յեզանը,
Բուրդան մաշկեն ցավ կըտա,
Էտ ա պահում խեզանը...

Նրա գրեթե բոլոր գործերի մեջ էլ խըտացած է արցախյան աշխատասեր գյուղացու կերպարը, որը նրա ստեղծագործությունները դարձնում է առավել բովանդակալից ու ներգործուն: Նա այդքանով չի բավարարվում, անընդհատ պրպտումների մեջ է:

Մելիքի կյանքում անմոռանալի է 1977 թվականը: Կազմակերպվեց ինքնուս ստեղծագործողների մարզային ցուցահանդես, որին մասնակցեց նաև ինքը:

Նույն թվականին հանրամիութենական ցուցահանդեսում հարյուրավոր ինքնուս ստեղծագործողների գործերի կողքին մի համեստ անկյուն էին գրավում Մելիքի գործերը:

Պատահական չէ, որ համամիութենական ժյուրին Մելիքի գործերին մեծ գնահատական տվեց և երաշխավորեց նրա անունը

մտցնել հրապարակվող գրքերի մեջ:

Այժմ ստեղծագործողների սեղանին դրված «Հայրենիքի ինքնուս արվեստագետները» գրքում ընթերցում ենք նաև Մելիք Վարդանյանի անունը:

Հաջողություն ցանկանանք մեր տաղանդավոր հայրենակից Մելիք Վարդանյանին:

Ռոբերտ ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ
Ժող. ստեղծագործության և կոլտուրլուսավորական աշխատանքի ԼՂԻՄ գիտամեթոդական կենտրոնի տնօրեն